Ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրի լիցենզավորման ենթակա գործունեությունը իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով և ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 33-Ն որոշմամբ սահմանված պահանջների համաձայն:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված՝ հասարակական անվտանգության, հանրության առողջության, այլոց իրավունքների և ազատությունների ապահովման նպատակով ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրի իրականացման լիցենզավորման համար անհրաժեշտ պահանջները և պայմաններն են՝

1)ավտոարտադրողի կամ դրա տարածքային ստորաբաժանման (ներկայացուցչություն կամ մասնաճյուղ) հետ պայմանագրի առկայություն, որի հիման վրա ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտուր իրականացնողը կատարում է ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) վաճառք և տեխնիկական սպասարկում.

2) փակ առևտրային տարածքի առկայություն.

3) փակ տեխնիկական սպասարկման կայանի առկայություն:

3.Լիցենզավորված անձինք իրենց գործունեության ընթացքում կարող են զբաղվել ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրի իրականացմամբ՝ պահպանելով որոշմամբ սահմանված պարտադիր պայմանները և պահանջները:

Լիցենզիա ստանալու համար հայտատուն (իրավաբանական անձը, որը լիազոր մարմին է ներկայացնում փաստաթղթեր՝ լիցենզիայի ձևակերպման նպատակով) լիազոր մարմին է ներկայացնում գրություն՝ նշելով կցված փաստաթղթերը, ինչպես նաև՝

1) հայտ՝ համաձայն N 1 ձևի.

2) պետական տուրքի վճարման անդորրագրի պատճենը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագրի վերաբերյալ տեղեկատվություն.

3) փաստաթղթեր, որոնք հիմնավորում են՝

ա) ավտոարտադրողի կամ դրա տարածքային ստորաբաժանման հետ պայմանագրի առկայություն.

բ) փակ առևտրային տարածքի առկայություն.

գ) փակ տեխսպասարկման կայանի առկայություն.

4) լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար նախատեսված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման կամ անշարժ գույքի օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմին հայտատուի հայեցողությամբ կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), ինչպես նաև՝ փոստով կամ առձեռն: Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում գրությունը և հայտը անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Լիցենզիան տրամադրվում է անժամկետ:

Ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտրիլիցենզավորման ենթակա գործունեության համար՝ գանձվում է պետական տուրք 2022 թվականի հունվարի 1-ից՝ բազային տուրքի 1000-ապատիկի չափով, 2023 թվականի հունվարի 1-ից՝ բազային տուրքի 2000-ապատիկի չափով՝ համաձայն «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ մասի: Պետական տուրքի փոխանցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում բացված 900005002424 հաշվեհամարին: